ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 148

ք. Երևան 18 .10.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 05028672, հասցե՝ ՀՀ, ք. Աշտարակ Երևանյան Շ 8/3) միջև 25.03.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/5-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 20 հատ արխիվի դարակաշարեր (դարակ մետաղյա 3 հարկանի) և 100 հատ կախիչներ (կախիչ պատի 5 կեռ), որոնց մասով Ընկերության կողմից մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ